

քանի մը սրբասացութիւններ, գրուած խոշոր բոլորգրով (մէկ էջը 11 տող), ձեռագիրը կը վերագրուի էջ 42ա. Գիշերապաշտաման՝ էջ 42ա—53բ. Առաստուռ ժամուն՝ էջ 53բ—67բ. Արհա-գայի՝ էջ 67բ—75բ. Երրորդ ժամուն՝ էջ 75բ—80բ. Վեցերորդ ժամուն՝ էջ 80բ—85ա. Իններորդ ժամուն՝ էջ 85ա—89բ. Ժամամուտը՝ էջ 90ա—100բ (վերջը կիսաս)։

ՅԵՇԱՍՏԱՅԱՎՐՈՒԹԻՒՆ ԵՆ ՈՂ ՄԻ ՄՈՂ։

(Հարսնալիւի)

Հ. Յ. ԱՍԱՆԻՍՏ



ՄԻԹՈՐ ԳՕԹԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐԷ ԵՒ ՀԱՅՈՑ ԻՆԵ ՔԱՆՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՌՈՒՆԴԷ

ՀԱՏԱՌԱՄ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՏԱՅԱՋՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՏԱՎՐՈՒԹԻՒՆ

(Հարսնալիւի)

III.

3. Երբեք։ Դատաստանական ապացոյցի այս ձեւը, որ առաջացել է մարդկութեան կրօնական փիլիսոփայութեան առաջին աստիճաններում, պարփակում է մի գաղափար, թէ ապացոյցները պէտք է հիմնուին հաստի վրայ, թէ մարդկային գործերի ու փոխադարձ յարաբերութիւնների մէջ ղեկավարող դեր են խաղում վերին, աներեւոյթ յոգերը, աստուծուն։ Իրական, երգում, իր էութեամբ լինելով հեթանոսական կրօնական հայեացքների արգասիք, թէեւ անցաւ քրիստոնէական վարդապետութեան մէջ, բայց հոգեւորականներն ամեն կերպ ձգտում էին սահմանափակել նրա կիրառումն ժողովրդի իրական կեանքում։ Ակներեւ է, որ Միթիմար Գօն էլ սկզբնական սեսակէտից դէմ է դատաւարական այս ձեւի ապացոյցմանը, վասն զի նրա կարծիքով դա արգելուած է քրիստոսից եւ մի մեծ մեղք է. «զի եւ առաքեալ ոչ ասաց՝ երգուայ, այլ՝ երգում. զի ոչ թէ երգուաւ, այլ զսովորութիւնն միայն եցոյց. բայց ինքն ի տեղի երգումն ասէ թէ — քաւ լիցի, որ է մի լիցի, եւ է՝ որպէս եւ քրիստոս ասաց՝ այո՛ւ՝ այո՛ւ եւ ոչ՝ ոչ» (Նախ. Ը, 49)։ Սակայն ժողովրդի կեանքում երգման սովորութիւնը շատ խորն էր արմատացած, եւ Միթիմար Գօն էլ, սեննելով, որ անհնարին է դա վերացնել, ստիպուած էր հաշտուել իրողութեան հետ։ Նա ընդունում էր, որ երգումը կարելի է

միայն իշխելով, իրեւ մի սովորութիւն, որ վաղաց ի վեր գոյութիւն է ունեցել ժողովրդի իրաւաբանական յարաբերութիւնների մէջ. «եւ արդ՝ ցուցաբ զայս, զի թէ հրամանս տեսն պահեալ էր մի՛ր ոչ կարօտեալ երգման, բայց այժմ վասն սովորութեանցն հարկաւոր լինի, եւ մանաւանդ ի դատաստանի (Անդ՝ եր. 50)։

Թոյլադրելով ապացոյցների երգման եղաւնակը, Դատաստանագրքի հեղինակը օրինաւոր եւ ընդունելի է համարում երգումն հետեւեալ դէպքերում։

ա) Երբ միանգամայն բացակայում են վկաների ցուցմունքներ. «Հասարակապէս յամենայն իրս դատաստանի, որոյ վկայ կայցէ մի լիցի երգումն. իսկ որոյ վկայ ոչ կայցէ, հարկ է երգումն» (Անդ՝ եր. 50)։

բ) Երբ դատուող կողմերը ոչ մի կերպով չեն կարողանում փոխադարձ համաձայնութեան գալ։

գ) Երբ հրամայում է երգուել ինքն դատաւորը, այն էլ անպայման իւր ներկայութեամբ։ Աներկբայ է, որ այս դէպքում դատաւորը ղեկավարուելու է վերջինչաւ առաջին եւ երկրորդ կէտերով եւ միայն անհրաժեշտ դէպքում է կիրառում իր այդ իրաւունքը, նախապէս զգուշացնելով եւ ուսուցանելով երգողներին երգման մեծ նշանակութեան ու հանդիսութեանը։

Հայոց Դատաստանագրքի մէջ արծարծած այդ տեսակ հայեացքը երգման նշանակութեան մասին շատ մեծ նմանութիւն ունի բիւզանդական իրաւունքի հետ։ Դա այդպէս էլ պիտի լինէր, քանի որ այս հարցում երկու իրաւունքներն էլ ղեկավարում են միեւնոյն երկրէտով՝ քրիստոնէական վարդապետութեան ազդեցութեամբ։ Բիւզանդական իրաւունքի համաձայն երգումն թոյլադրել է, երբ դատաւարութեան միջոցին բացակայում են օրենքի այլ ապացոյցներ (Ileira LXIX, 2. Coll. IV, Nov. 45)։

Հայոց Դատաստանագրքը միանգամայն արգելում է երգումն առ աննշան քաղաքացիական գործերի ժամանակ. «եւ մի լիցի վասն սակաւ իրաց, որպէս թէ տասն դահեկանի, երգումն» (Նախ. Ը, եր. 53)։ Այս դէպքում դատաւորի վրայ պարտաւորութիւն է դրում մի

1 Zachariae — Geschichte d. griechisch-römischen Rechts. եր. 398. համեմատ. նաեւ Законы царя Византия, Греческие законы: 146, 244, 246, 405, 406 եւ 411. հրատ. Գրեկիսի, Թիֆլիզ։

կերպ հաշտեցնել երկու կողմերը, որպէս զի խուսափել երգուելու անհրաժեշտութիւնից. այս համար հարկ է համաձայնեցնել երկու կողմերին բաւականանալ վիճելի պարտքի կէս գումարով վճարումով, իրեւն «զին երգման».

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ դատուող կողմերից որոնք են երգում տալու, Մխիթար Գօշը հետեւեալ կերպով է պատասխանում: Քաղաքացիական գործերում դատաստանագիրքը պահանջում է, որ նախ երգուի պատասխանատուն, վասն զի՝ Մխ. Գօշն համոզմունքով՝ ամբաստանողը, եթէ իւր գանգատը սկսել է շարամուտութիւնից ու անաջնիւ շարժառիթներից, չի վարանի՝ աներկիւղաբար վասն ազատութեան, այստեղ էլ սուտ երգումներ տալ: Քրեական գործերում առաջին երգումն պարտաւոր է ամբաստանողը կատարելու, մանաւանդ երբ նա չունի վկաներ կամ ապացուցման այլ փաստեր: Իսկ ամբաստանուածները զրկուած են երգում տալու իրաւունքից իրենց գործի պաշտպանման միջոցին, վասն զի քրեական գործերի՝ աւազակութեան, մարդասպանութեան, շնութեան, գողութեան եւ այլ այսպիսի յանցանքների մէջ մեղադրուած «շարագործքն ոչ զանգիտեն երգուել».

Սակայն ոչ բոլոր անձինք իրաւունք ունին երգում տալու: Այդ նպաստով դատաստանագիրքը ստուգութեան է առնում, թէ որ կարգի մարդիկ զրկուած են այդ իրաւունքից: Մխիթար Գօշն հետեւեալ անձերին է ի նկատի առնում. ա. Անլեւոնները, ինչպէս եւ բոլոր օրէնսդրութիւնների մէջ, բռնում են առաջին տեղը անիրաւունակների շարքում: «մանկան մի տացի երգում, զի խակ է հասակաւն եւ ոչ գիտէ զահ եւ զերկիւղ Աստուծոյ դատաստանին (Կախ. Ը, եր. 55): Անափաստութիւնն ըստ դատաստանագրքի տեսում է մինչեւ 25 տարեկան. այս գէպքում Մխիթար Գօշը նոյն կարծիքն է պաշտպանում, ինչ որ արտայայտուել էր անչափահասների վկայութիւն տալու իրաւունքի մասին:

բ. Ծեփերը չեն կարող երգում տալ, «զի մերձեալ են ի մահ, մի գուցէ անապաշխար մեռանիցին» (Անդ): Սա մի տարօրինակ իրաւունք է, որ ոչ մի օրէնսդրութեան մէջ չենք գտնի: Մխիթար Գօշն հայեացքն այս հարցում սխալ հիմունքների վրայ է կառուցուած: Ծեփութիւնն ասած բանը խիստ առաձգական հասկացողութիւն է. ծեփութիւնն ու մահը, թէեւ ժամանակով մօտիկ են իրար մեր անապատները:

ների մէջ, սակայն մարմնի ֆիզիկական առողջութիւնն եւ այլ բարեմասնութիւնները կարող են այն ազգերութիւն ունենալ, որ ծեփութիւնն ու մահը կարող են իրարից բաժանուած լինել երկար ժամանակով, զգալի մեծ տարածութեամբ: Ահա այդ հանգամանքն է, որ մեր դատաստանագիրքը ոչ մի տեղ չի որոշում գոնէ մօտաւորապէս, թէ որ հասակից, որ տարիքից է հարկաւոր ծեփութիւնն հաշուել:

գ. Հիւնդները. այստեղ Մխիթար Գօշը ղեկավարում է նոյն հայեացքներով, որոնք վերաբերում են ծեփերի երգմանը, զի մերձ է լափն մահու, դատաստանագիրքն երեւի նկատի ունի միայն ծանր ու անյոյս հիւնդներին, որոնք մեռնելով անապաշխար պէտք է մնային: Յամենայն դէպս Մխիթար Գօշը խորհուրդ է տալիս նպակով, մինչեւ որ հիւնդը կազդուրուի եւ ապա երգուի, «այլ թոյլ տացին, զի առողջացի եւ ապա լիցի» (Անդ):

դ. Աղւշները, իրեւն յանցաւորներ ու պատժուածներ չեն կարող երգուել, «զի մի մեղս ի վերայ մեղաց զիցէ» (Անդ):

ե. Անլուս, որոնք բացի այն, որ ենթակուում են վերոյիշեալ չորս կետերի առաջագրած պահանջներին, նոյնպէս չեն կարող վայելել երգում տալու իրաւունքը, երբ յղն են, կամ նոր ծննդկան: Այստեղ հայոց դատաստանագրքի հիշմանն աներկաբայ ազդուել է ժողովրդական սովորութիւնից: Ինչպէս յայտնի է, հայ ժողովուրդը, նոյն իսկ մեր օրերը, առգորուած է այն նախապաշարունակներով ու հաւատալիքներով, թէ կիրն ընդհանրապէս անսուրբ է, այդ անսուրբութիւնը աւելի եւս մեծ է դառնում կանանց յղութեան, ծննդկանութեան, նաեւ դաշնանի-ամսականի ատենները:

զ. Մոտեմուտներ, արեւոյններ եւ Լուսններ — «մինչեւ զղացին, մի լիցի նոցա երգումն եւ մի ընդունիցի զնոսա վկայ».

ը. Լուսններ. անվիճելի է, որ եթէ երգումն քրիստոնէական վարդապետութեան տեսակետից արգելւում է, եւս առաւել Մխիթար Գօշն անյարմար է գտնում քրիստոնէական եկեղեցույ ներկայացուցիչներին՝ քահանաներին եւ կուսակրօններին՝ երգում ուտել դատաստաններում (Կախ. Ը, եր. 56):

Ինչպէս տեսնուի նեղ, վերջին երեք կարգի անձանց երգման իրաւունքի վերաբերմամբ դատաստանագիրքն շոնք ելակէտով է ղեկավարուում, ինչ որ ունէր նոյն կարգի անձանց վկայութիւնների իրաւունքի նկատմամբ:

Սակայն զրկելով վերոյիշեալ բոլոր կարգերի անձերին երգում տալու իրաւունքից, Մխիթար Գօշն այնուամենայնիւ հնարաւորութիւն է գտնում դատաւարութեան գիւրումեան համար որոշ բացառութիւններ անելու: Այստեղ դատաստանագրքի հեղինակը սահմանում է փոխանորդութեան ձեւը երգման մէջ, մի հիմնարկութիւն, որ շատ տարօրինակ է թւում, քանի որ այդպիսի հիմնարկութիւն ոչ մի օրէնսդրութեան մէջ չենք պատահի: Իսկ այսօրիկ, զոր ասացաք յառաջ, թէ՛ չէ պարտ երկնուշ, թէ իցին նոցա մայր եւ քոյր կամ եղբայր, կամ այլ սիրելի կամ մերձաւոր, նախ երգութիւնն եւ զմիւսնց բոն ըստ բնութեան, եւ ընդունել է: Նմանապէս եւ քահանաների մասին. «այլ թէ հարկ լիցի դատաստանի, ազգականք նոցա լցցեն զտեղի նոցա եւ ընկալեալ լիցին որպէս ըստաւորաց, որպէս եւ վասն այնօրիկ ասացաք, որոց ոչ պատահ համարեցաք զերգութեան» (Նախ. Ը, եր. 56):

IV.

Մխիթար Գօշն ճանաչում է երգման երկու ձեւ — որոցման եւ ինքնուշման: Ինչպէս յայտնի է, հայոց պատմութեան միջին դարերում գոյութիւն ունէին երգման երեք ձեւեր՝ վայոման, որոցման եւ ինքնուշման: Վայոման ձեւի գործածութեան միջոցն ասում էին՝ «Աստուած է վկայ», երկրորդի — «Ոչ Աստուած ուրացեալ է, թէ հանց է», իսկ երրորդի՝ «Աստուծոյ փառքն, որ այսպէս է:», Մեր դատաստանագրքի մէջ չի յիշուում երգման վայոման ձեւը, այլ միայն վերոյիշեալ երկուսը: Քննենք երգման այդ երկու ձեւերը:

ա. Որոցման երգութեան: Ըստ Մխիթար Գօշի ուրացութեան երգութեան կոչում է այն, «որ գնէ զձեռս ի խաչ կամ յաւետարան կամ յեկեղեցի եւ հրաժարէ ուրացմամբ կամ ուրացութեամբ ասել թէ՛ քրիստոնեայ ոչ եմ եթէ չինք այդ այդպէս» (Նախ. Ը, եր. 51): Երգման այս ձեւը կատարւում էր այն դէպքերում, երբ այլազգի պահանջում էր քրիստոնեայի վկայութիւն: Եւ դատաստանագրքի հեղինակը մի առ մի յիշում է, թէ ինչպէս են սովոր այլազգիք տալ իրենց երգութեան ուրացութեան.

1. Յեկեղեցի մասնելով զլոյս շինուցանել:
2. Բերանով ի ընդ եւ ի ձէլ փռել:
3. Խաչ ի գետնի նկարել եւ կոխել:
4. Ձշան զհետոյ ունել:

5. Ոսկի ի ձեռն անուշ:

6. Ի գետնի երկուս ծիրա անել եւ ի միոյ ի միւս մտանել:

Երգման այդ եղանակները Մխիթար Գօշն բացարձակօրէն մերժում է ընդունելով, որպէս քրիստոնեական հաւատին հակառակ մի բան: Նա ոչ միայն դատաւարութեան է երգման այդ տեսակ ձեւերը, այլ եւ խստիւ արգելում է այդ կիրառել դատաստանական գործերի ժամանակ: Մխիթար Գօշն մի առ մի թուելով ուրացական երգման ձեւերը, որոնք գոյութիւն ունէին նրա ժամանակները հայ ժողովրդի մէջ, գիպուածով մեզ տալիս է ժողովրդական-իրաւական սովորելիքների թանգագին ու հետաքրքրի փաստեր: Եւս առաւել հետաքրքրութիւն են շարժում այդ երգութեան ձեւերը, քանի որ նրանց մասնագրքերը պահպանուել են տակաւին մեր ժամանակակից հայերի սովորութեան իրաւունքի մէջ:

Թիֆլիզում վրաց լոգաւորութեան ժամանակ հայերը շատ անգամ վերջացնում էին իրենց վէճերը, մանաւանդ նիւթական պահանջները երգմամբ: Երգուող անձը հագնում էր սպիտակ շորեր եւ ձեռքին վառած մոմ բռնած մտնում էր եկեղեցի զանգագին հարութեամբ. այնտեղ ալ ձեռքը դնելով խաչի ու աւետարանի վրայ ա. սում էր երգում խոսքերը, զորքերնայն՝ «Թող Աստուած պատժէ ինձ, եթէ ես սուտ եմ ասում եւ այլն», եւ ապա համարուելով խաչն ու աւետարանը, հանգցնում էր վառած մոմը: Այժմ էլ շատ տեղերում հայերը սովորութիւն ունին երգուիլ հետեւեալ ձեւով. հակառակորդները դիմում են եկեղեցի եւ ձեռքը դնելով եկեղեցու պատի կամ դռան վրայ երգում են ուսում եւ ապա համարում են ձեռք դրած սեղը:

Վերոյիշեալ բոլոր փաստերը ցոյց են տալիս, թէ որ աստիճանի խորն են արմատացած եղել ժողովրդի սովորութեան իրաւունքում երգում այն ձեւերը, որոնք Մխիթար Գօշն անուանում է ուրացական եւ որոնք հայ սովորութեան իրաւունքի պատմական զարգացման համար երգման հարցի վերաբերեալ տալիս են հետեւի ու ճանապարհորդները նրա լուսաբանութեան ու հետազոտութեան:

Բ. Խաչաւորութեան երգութեան, որի ձեւը Մխիթար Գօշն առաջ է բերում, կայանում է հետեւի.

1 Վասն 8. Վ. Բատաւան — դատաստանագրքի հայոց Մխիթար. Գօշի: Յաւաւարութեան հեղինակի, Թ. 173:

տեւեալում. “դնէ դձեռն ի խաչ, կամ յաւե-
տարան, կամ յեկեղեցի, դիտելով զի Աստուած
սրտագտէս է, ասէ թէ, դիտէ Աստուած եւ խաչս
այս եւ աւետարանս վկայ է, զի ուղիղ է զոր
ստեմնս եւ ոչ է սուտ. եւ կամ ասէ թէ՝ սոցա
փառքն եւ զօրութիւնն՝ զի ոչ ստեմն, (Նախ,
Ը, Եր. 51): Երդման միայն այս ձեռն է ճանա-
չում եւ ընդունում Միխիթար Գօշը եւ դատաս-
տանական երգման բոլոր գէպքերում պահան-
ջում է այն այս եղանակով միայն կատարել
երգութիւն:

Բաղդաստելով երգման վերոյիշեալ երկու
ձեւերը՝ ուրացականն ու խոստովանականը, կը
տեսնենք, որ առաջին ձեւի մէջ անդրադառ-
նում են ալեւոր Տնութեան սովորոյթներն ու
Հայեացքները երգման նշանակութեան մասին,
երբ երգումն կրում էր անէծքային կամ նզովա-
կան բնաւորութիւն: Մովսիսական օրէնքներում
գտնում ենք երգման համարիչ բաժանումն, ուր
դատարեւում են երկու ձեւեր՝ *schebua* եւ
alal. Երկուսն էլ խիստ նման են Հայկական երգ-
ման երկու ձեւերին սակայն զանազանում են
նրանով միայն, որ հրէական վերջին ձեւը, որ
համապատասխան է Դատաստանագրքի ուրացա-
կան երգմանը, օրէնքով թշուարեղէն էր ճանաչ-
ւում¹:

Այդ վերջին երկու ձեւերը՝ ուրացականը,
որոնք կրում էին անէծքային բնաւորութիւն,
պահպանուել են ժողովրդական սովորութիւն-
ներում ամենահին ժամանակներից ի վեր իբրեւ
մնացորդներ սովորութեան իրաւունքի մէջ եր-
բեմ ծաղիղ օրդմանի (Ordalim): Օրդալի-
ների հիմնական գաղափարը կայանում է նրա-
նում, որ հին իրաւաբանական աշխարհայեցո-
ղութեամբ կարծում էին վկայ կանչել աստուած-
ներին, զանազան օգիներին եւ աներեւոյթ ոյժե-
րին: Երգութեան ուղիղում էր սոսկալի անէծ-
քային ու նզովական խօսքերով: Սրանով հաւա-
տում էին, որ սուտ երգուողը ամիջապէս իր
գլխին կը բերի վրիժառու աստուածների ու
խորհրդաւոր աներեւոյթ ոյժերի գատաստան:
Հաւատում էին նաեւ, որ եթէ երգուողը այդ
լուգէին անխնայ ձեւ, դա ապացոյց է նրա անմե-
ղութեան կամ թէ չէ աներեւոյթ ոյժերը կա-
րող են սուտ երգուողին պատիժ հասցնել ա-
պագայում եւ վաղ թէ ուշ նա իր արժանի
հատուցումն կը ստանայ: Զարմանալի չէ ուրեմն,
որ հայերի մէջ գոյութիւն ունեցող այդ տեսակ
հայեացքները ու սովորութիւններ Միխիթար Գօշին

թւում էին հեթանոսական անոտապաշտու-
թիւն, որը նրա համոզմամբ արժանի էր ամենա-
խիստ հայածանքի ու արգելութեան: Հետեւա-
պէս ուրացական երգումն ոչ մի կերպ թոյլա-
տրելի չպիտի լինէր դատավարական գործու-
նեութեան մէջ եւ այդ նպատակով էլ Միխիթար
Գօշը դուրս է վանել այդ սովորութիւնները իր
Դատաստանագրքի գատավարութիւնից:

V.

Վերը տեսանք, որ Միխիթար Գօշը ընդ-
հանրապէս հակառակ է երգման եւ միայն ստի-
պուած է ընդունել ապացոյցների այդ ձեւը, այն
էլ խոստովանական, իբրեւ մի փոքրիկ շարիք,
իրեւ ծայրայեղ միջոց, որովհետեւ երգումն
անյիշելի ժամանակներից ամուր հաստատուել
էր հայերի սովորութեան իրաւունքում: Հաշ-
տուելով այդ գաղափարի հետ, նա այնու ամե-
նայնիւ իրն է անում եւ ձգտում է ցոյց տալ, որ
ընդհանրապէս ապացոյցների երգման ձեւը ան-
ընդունելի է քրիստոնէական վարդապետութեան
մէջ եւ այդ պատճառով էլ դատաստանական
երգութեան համար նշանակում է որոշ պատիժ,
որին ենթարկուելու է անխոր իւրաքանչիւր
երգուող: Քրիստոնէական վարդապետութիւնը
դատաստանական երգման հիմնարկութեան մէջ
տեսնում էր հեթանոսական հայեացքների ու
սովորութիւնների մնացորդներ. երգումն ուսողները
մեծ յանցանք էին գործում իրենց դաւանած
քրիստոնէական կրօնին դէմ, մեղանշում էին
հաւատի ու խղճի դէմ: Ուսումնաւորած էին
համարում, որ այդ տեսակ յանցաւորները մա-
քրուէին, ենթարկուելով արժանի պատիժ-
ներին:

Նշանակելով որոշ պատիժներ երգման
համար, Դատաստանագրքի հեղինակը սակայն
վարում է մասամբ ներողամտաբար: Այդ պա-
տիժները — եկեղեցական ապաշխարանքն են
ու տարբերում են միանգամայն միւս պատիժ-
ներից, որոնք եկեղեցին սովորաբար անխնայօրէն
նշանակում էր մեղապարտների ու յանցաւոր-
ների նկատմամբ: Այդ տեսակ պատիժի մեղմա-
ցուցիչ հանդամանքներն ընդունելի էին ճանաչ-
ւում միմիայն օրինական երգման՝ խոստովանա-
կան ձեւի՝ համար, իսկ միւս ապօրինի ձեւի, ու-
րացական երգման՝ համար, եկեղեցական պա-
տիժները սովորաբար պահպանում էին իրենց
աւանդական խոստութիւնը, վրան զի Միխիթար
Գօշի կարծիքով երգման անթույլատրելի այդ

¹ Saalschütz - Das mosaische Recht, Կ. 609:

վերջին ձևը պէտք է անպայման արտաբերուի դատավարական գործունեութիւնից:

Դատաստանագիրքը Հետեւեալ պատիժներն է սահմանում երգման համար:

1. “Եթէ որ հրամանաւ դատաւորի երգնուցու եւ չիցէ վայրապար կամ վասն սակաւ իրաց, եւ ճշմարիտ իցէ, եւ խոստովանութեան իցէ երգումն եւ ոչ ուրացութեան, երէտ մի ապաշխարութիւն սահմանեցէ ի վերայ նոցա եպիսկոպոսն, (Նախ. Ը, եր. 57):

2. “Իսկ եթէ ստութեամբ իցէ երգումն եւ խոստովանութեան եւ ոչ ուրացութեան, էրէտ մի ապաշխարեցէ, (Անդ):

3. “Իսկ եթէ զուրացութեան երգումն երգնուցու որ, թէ ճշմարիտ է եւ թէ սուտ, զապաշխարութիւնն մինչև ի մահ կալցի, (Անդ, եր. 58):

4. “Իսկ եթէ ի կրօնաւորութեան իցէ կամ յաշխարհական քահանայից, որոց ոչ հրամայեցաւ, եւ երգնուցուն, թէ սուտ եւ թէ ճշմարիտ, թէ վստաստմանութեան եւ թէ զուրացութեան երգումն, մինչև ի մահ լիցի ապաշխարութիւնն, (Անդ):

Բացի այս վերոյիշեալ ընդհանուր բնոյթ կրող կանոններից Դատաստանագիրքը սահմանում է նաեւ մի քանի լրացուցիչ պատմական կանոններ, որոնք մասամբ փոփոխում են յաջորդ սահմանած պատիժները: Վերոյիշեալ 2րդ կէտին Երկրորդ Գօշը կցում է. “եւ տեսցեն զիսանակնք եւ զինն վասն որոյ սուտ երգուաւ, եթէ սակաւ իցէ եւ ոչ կարի բազում” աղբատաց տալ հրամայեցեն, (Անդ):

Իսկ վերոյիշեալ 4րդ կէտին, որով սահմանում էր երգումը հոգեւորականների պատիժը, կցում է հետեւեալը. “Եւ թէ կրօնաւոր երգնուցու կամ քահանայ, կամ նոքա” որոց ոչ հրամայեցաւ երգումը, եւ երեւեցի յետոյ սուտ լինել երգումն, եւ ինքն զպատճառն ոչ գիտէր, զապաշխարութիւնն նոքա պահեցեն վասն որոց երգուան. իսկ եթէ գիտէր եւ երգուաւ սուտ՝ ինքն պահեցէ զապաշխարութիւնն” (Անդ):

Ապաշխարանք նշանակելու հարցի որոշումն վերապահում է եպիսկոպոսներին ու կրթուած վարդապետներին, որովհետեւ ըստ Դատաստանագիրքի միայն սրանք կարող են համարուիլ իսկական դատաւորներ: Ընդ սմին ապաշխարանքների վերոյիշեալ կանոնները յարաբերական ընտելութիւն ունեն: Դատաւորները՝ տուեալ դէպքում եպիսկոպոսներն ու վարդապետները,

լիազօրութիւն ունեն, կատարուած երգումների հանգամանքներին ու պայմաններին նայած, ուժեղացնել կամ մեղմացնել պատիժների խտութիւնը: Դատաւորները օժտուած լինելով այդպիսի եկեղեցական պատիժներ սահմանելու հարցում անձնական ազատութեամբ, այնու ամենայնիւ ըստ Դատաստանագիրքի չպիտի շեղուին այն գծից, ու սահմաններից, որոնք թելադրում է հայոց դատաստանագիրքի պատմական նորմերի ընդհանուր ոգին:

(Հարանգիւն)

Խ. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ



Ե Զ Ո Ւ Ր Ա Ն Ա Վ Ա Ն

ՍՏՈՒԳՐԱՆԵՎԱՆ ՀԵՏԸՉՕՏՈՒԹԻՒՆՔ

47.

(Հարանգիւն)

6. Հայ. Լոյծ (լոյծ-սէն)՝ Լոյծ արմ. օրհնակ. *q̄louid-s-էն “խոնաւ” է ըստ իս. առ. սիր. *kle-dyatis* եւայլն, յուն. *πλάθος* (ա. Karl Charpentier KZ. 40, 437 հետեւ. Fröhde. BB. 8, 162) հանդ. *hlawd* “մեղ” = նիգ. **hlau-dā* (հնգեւ. **kle-n-tō* = **q̄lou-nō*) ըստ Charpentierի Հայ. ձեւը *q̄lō*՝ օ-ի ընդարձակութիւն մը ըլլալով չ-ով, հնդեւ. **q̄lod*, է. **q̄lod* “խոնաւ”-ի մօտ որուն վրայ աւելի ընդարձակ Charpentier յիշատել կը խօսի:

48.

1. Հայ. մահ (մի, մահ) հնդեւ. *māhēn* (*-kenós, *-kōn-[es]-ին համապատասխանելով, յուն. *μακρός* “երկայն” *μήκος* (չէզ.) “երկայնութիւն” ալ. **mas-* “միջ” *masah* “մեծութիւն” եւայլն: հնդ. մի եւ նոյն է ըստ իս. տ. հատ. Walde *macr* բառին տակ (էջ 357) եւ Spr. Abh. հատ. 2: Նորա համար կը նշանակէ մահ ոչ միայն “բաժանումն, բաժին, պարգև” այլ եւս “կողմն, կայս” որ վերջին նշանակութեան մէջ դեռ աւելի սղակ մնացած ըլլալով. **մեծութիւն* մը իբր բոլորին բաժնուած ընդարձակութիւնը նիքիմասը բառին:

1. Այս վերջին ստուգաբանութիւնս կրնուած է “Հանդէս”-էն ֆրանս. լեզուալ. *Le Monde Oriental*՝ Էջ (Upsala) “*Etymologies indo-européennes*” par Luc de Patrubány, Budapest համ. 1 (61) ապրիլ եւ Էջ 20 համ. ներքին, իսկ վերջ յիշուած “*Notes d'étymologie*” (Mém. de la Société de Lingu.) իմ փափարաց համեմատ անսոյ պատճառ է: